Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«Զինծառայողների ապահովագրության» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Զինծառայողների ապահովագրության» Հիմնադրամի (այսուհետև՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Հիմնադրամի 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որի 2021թ. ապրիլի 30-ին թվագրված անկախ աուդիտորի եզրակացությամբ արտահայտվել է առանց վերապահման կարծիք՝ այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ի լրումն, ինչպես ներկայացված է ծանոթագրություն 21-ում, Հիմնադրամի ղեկավարությունը վերադասակարգել է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների որոշ հոդվածներ՝ ընթացիկ տարվա ֆինանսական հաշվետվությունների հետ համապատասխանեցնելու նպատակով: Մեր կողմից աուդիտի են ենթարկվել նաև այդ վերադասակարգումները:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

Grant Thornton

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության շրջանցում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան — Էմիլ Վասիլյան

Տնօրեն — Առաջադրանքի պատասխանատու

30 մայիսի 2022թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ		156,733	-
Ոչ նյութական ակտիվներ		3,436	-
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	4	1,402,309	3,342,575
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	5	7,303,869	4,721,415
		8,866,347	8,063,990
Ընթացիկ ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր		6,974	-
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	4	1,884,276	50,198
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	5	10,497,727	16,732,791
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	2,470,298	9,460,069
		14,859,275	26,243,058
Ընդամենը ակտիվներ		23,725,622	34,307,048
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Պարտավորություններ հատուցումների գծով	7	102,912,893	23,694,770
Վարձակալության գծով պարտավորություն		33,651	-
		102,946,544	23,694,770
Ընթացիկ պարտավորություններ			
Պարտավորություններ հատուցումների գծով	7	12,176,620	3,309,737
Վարձակալության գծով պարտավորություն		40,343	-
Կրեդիտորական պարտքեր		9,129	-
		12,226,092	3,309,737

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Զուտ ակտիվներ			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի իրական արժեքի վերագնահատման պահուստ	8	(29,979)	67,349
Կուտակված արդյունք		(91,417,035)	7,235,192
		(91,447,014)	7,302,541
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		23,725,622	34,307,048

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2022թ. մայիսի 30-ին

Գարիկ Սարգսյան
Տնօրեն

Լուսինե Զուրաբյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտներ			
Եկամուտ պարտադիր վճարներից և նվիրաբերություններից	9	32,173,532	17,110,134
Ֆինանսական եկամուտ	10	1,841,151	2,424,133
Այլ եկամուտներ		240	650
		34,014,923	19,534,917
Ծախսեր			
Հատուցումների գծով ծախսեր		(123,280,125)	(28,233,882)
Հատուցումներ աշխատակիցներին		(76,326)	-
Մաշվածություն և ամորտիզացիա		(18,050)	-
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի վերաչափումից օգուտ/(վնաս)	11	51,881	(62,898)
Ֆինանսական ծախս	12	(9,292,770)	(775,810)
Այլ ծախսեր		(51,497)	(16)
Փոխարժեքային տարբերությունից զուտ վնաս		(263)	-
		(132,667,150)	(29,072,606)
Տարվա արդյունք		(98,652,227)	(9,537,689)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունից զուտ վնաս		(89,886)	(91,086)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի փոփոխություններ		(7,442)	9,963
Ընդամենը տարվա այլ համապարփակ վնաս		(97,328)	(81,123)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(98,749,555)	(9,618,812)

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի իրական արժեքի վերագնահատման պահուստ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	148,472	16,772,881	16,921,353
Տարվա արդյունք	-	(9,537,689)	(9,537,689)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	(81,123)	-	(81,123)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(81,123)	(9,537,689)	(9,618,812)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	67,349	7,235,192	7,302,541
Տարվա արդյունք	-	(98,652,227)	(98,652,227)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	(97,328)	-	(97,328)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(97,328)	(98,652,227)	(98,749,555)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(29,979)	(91,417,035)	(91,447,014)

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված պարտադիր վճարներ և եվիրաբերություններ	32,173,532	17,110,134
Տրված հատուցումներ	(44,483,704)	(8,029,925)
Աշխատանքի վճարմանն ուղղված ծախսեր	(50,870)	-
Այլ եկամուտներ	88	650
Այլ ծախսեր	(95,041)	(16)
Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	(12,455,995)	9,080,843
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(88,455)	-
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	(12,825,000)	(14,345,914)
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	-	(198,346)
Բանկերում տեղաբաշխված միջոցների մարում	15,770,000	12,447,777
Մուտքեր պետական պարտքային արժեթղթերում կատարված ներդրումների մարումից	-	300,000
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ	2,323,286	1,886,366
Պետական պարտքային արժեթղթերում ներդրումներից ստացված տոկոսներ	285,500	290,500
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	5,465,331	380,383
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	(6,990,664)	9,461,226
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(264)	-
Ակնկալվող պարտքային կորուստների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	1,157	(1,157)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	9,460,069	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	2,470,298	9,460,069

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Զինծառայողների ապահովագրության» Հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ) հիմնադրվել է 2017թ. հունվարի 13-ին՝ որպես շահույթ չհետապնդող կազմակերպություն:

Հիմնադրամը ստեղծվել է՝ հայրենիքի սահմանները պաշտպանելիս զոհված, անհայտ կորած, հաշմանդամություն ձեռք բերած մարտիկների և նրանց ընտանիքների սոցիալական բարօրության, կայուն և հավասար ապահովագրական հատուցումներ տրամադրելու նպատակով:

Հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:

Հիմնադրամը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետությունում աշխատող յուրաքանչյուր անձի կողմից փոխանցվող ամսական պարտադիր վճարներից (կախված եկամտի չափից) և այլ բարերարների կողմից ստացված նվիրաբերություններից:

Հիմնադրամը գտնվում է ՀՀ ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 26/1 հասցեում:

Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհուրդը բաղկացած է 7 անդամից:

Հիմնադրամի հիմնական նպատակները հետևյալն են՝

- Հայաստանի Հանրապետության պաշտպանության, մարտական գործողություններին մասնակցելու, կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության, կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցումը և այդ նպատակի ապահովման համար օրենքով սահմանված գործառնությունների իրականացումը:
- Խրախուսել յուրաքանչյուրին՝ սատար կանգնել հայկական բանակի զինվորներին՝ նվիրատվություն կատարելով վերջիններից կյանքի ապահովագրության համար:

Գործարար միջավայր

Իրավիճակն Հայաստանի Հանրապետությունում սրվել է Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա կարող են տարբերվել Հիմնադրամի ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»*:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների: Պետական պարտքային արժեթղթերում ներդրումները ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով: Վարձակալության գծով պարտավորությունները ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 14-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2021թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2021թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2021թ□, որևէ էական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը
Տարբեր	*Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (փուլ 2) (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 16, ՖՀՄՍ 4, ՖՀՄՍ 7 փոփոխություններ)*

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի
ՖՀՄՍ 16	*COVID-19-ի հետ կապված վարձակալության արտոնություններ 2021թ. հունիսի 30-ից հետո*	*1 ապրիլի 2021թ.*
ՖՀՄՍ 3	*Հղումներ հայեցակարգային հիմունքներին (ՀՀՄՍ 3 փոփոխություններ)*	*1 հունվարի 2022թ.*
ՀՀՄՍ 16	*Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)*	*1 հունվարի 2022թ.*
ՀՀՄՍ 37	*Անբարենպաստ պայմանագրեր.*	*1 հունվարի 2022թ.*

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի
	Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)	
ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16	*2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ)*	*1 հունվարի 2022թ.*
ՖՀՄՍ 17	*Ապահովագրության պայմանագրեր*	*1 հունվարի 2023թ.*
ՖՀՄՍ 4	*ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարացում (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՖՀՄՍ 17	*ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – համադրելի տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 1	*Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 12	*Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*

2.6 Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Հիմնադրամը կիրառում է հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները և իրականացնում է նախորդ տարիների սխալների ուղղումը հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո թողարկման համար հայտարարված ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթում՝ վերահաշվարկելով ներկայացված նախորդող ժամանակաշրջանների համեմատելի այն գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ եթե սխալը տեղի է ունեցել նախքան ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանը, այդ դեպքում՝ վերահաշվարկելով ներկայացված ամենավաղ նախորդող ժամանակաշրջանի համար ակտիվների, պարտավորությունների և զուտ ակտիվների սկզբնական մնացորդները: Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ տարիների համադրելի տեղեկատվությունը, ներկայացված են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա ֆինանսական տեղեկատվությանը (տե՛ս ծանոթագրություն 21):

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 480.14 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 542.61 ՀՀ դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 522.59 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 641.11 ՀՀ դրամ):

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Վարձակալված տարածքները նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են ֆինանսական վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է՝ համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Ակտիվի օգտագործման իրավունք (գրասենյակային տարածք)	- 5 տարի
Սարքավորումներ և այլ հիմնական միջոցներ	- 3-10 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի հաշվապահական հաշվառման ծրագրերի և այլ ոչ նյութական ակտիվների համար:

3.4 Վարձակալված ակտիվներ

Հիմնադրամը որպես վարձակալ

Հիմնադրամը կնքում է վարձակալական պայմանագիր գրասենյակային տարածքի վարձակալության համար 5 տարով՝ երկարաձգման ժամկետով:

Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն պայմանագրի գործողության սկզբում: Վարձակալության պայմանագիրն իրավունք է տալիս որոշակի ժամանակահատվածում սահմանելու որոշակիացված ակտիվի օգտագործման ուղղությունները և ստանալու որոշակիացված ակտիվից բոլոր տնտեսական օգուտները՝ փոխհատուցման դիմաց:

Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Հիմնադրամը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Հիմնադրամի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Հիմնադրամը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Հիմնադրամը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Մեկնարկի ամսաթվին Հիմնադրամը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Հիմնադրամի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

3.5 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Հիմնադրամի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են տարվա արդյունքում, արտացոլված են ֆինանսական ծախսերում և ֆինանսական եկամուտում: Հիմնադրամի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 15-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Հիմնադրամի դրամական միջոցները և դրանց համարժեքները, դեբիտորական պարտքերը և բանկերում տեղաբաշխված միջոցները:

Ֆինանսական ակտիվներ՝ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող

Հիմնադրամը հաշվառում է իր ֆինանսական ակտիվները իրական արժեքով՝ այլ ֆինանսական համապարփակ արդյունքների միջոցով, եթե դրանք բավարարում են հետևյալ պայմաններին.

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է համապատասխան դրամական հոսքերը «պահել հավաքագրման համար» և վաճառել դրանք և
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմանները առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պետական պարտքային արժեթղթերում կատարված ներդրումների գծով օգուտը և վնասը ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի, երբ ճանաչվում են շահույթում կամ վնասում.

- տոկոսային եկամուտ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ,
- ակնկալվող պարտքային կորուստներ և վերադարձ
- արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված ցանկացած օգուտ կամ վնաս կմարվի ակտիվի ապաճանաչման ժամանակ՝ պահուստներից վերադասակարգվելով:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկման ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են բանկերում տեղաբաշխված միջոցները, ներդրումները պետական պարտքային արժեթղթերում, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և դեբիտորական պարտքերը:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Հիմնադրամի՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Հիմնադրամը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):
- «Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգված են եղել «Փուլ 1»-ում՝ համաձայն ՖՀՄՍ 9-ի:

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես ակտիվների ընդհանուր հաշվեկշռային արժեքից նվազում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների արժեզրկումից կորուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ այդ ակտիվների համարժեքը հավասար է իրենց իրական արժեքին: Այնուամենայնիվ, արժեզրկումից կորուստները բացահայտվում և ճանաչվում են իրական արժեքի ճշգրտման պահուստում:

Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում

Պետական պարտատոմսերում ներդրման արժեզրկված լինելը գնահատելիս՝ Հիմնադրամը հաշվի է առնում հետևյալ գործոնները.

- վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությամբ,
- եկամտաբերության գնահատումը վարկանիշային գործակալությունների կողմից,
- երկրի կարողությունը մուտք գործել կապիտալ շուկաներ նոր պարտքի թողարկման համար:

Բանկերում տեղաբաշխված միջոցներ

Բանկերում տեղաբաշխված միջոցների արժեզրկված լինելը գնահատելիս՝ Հիմնադրամը հաշվի է առնում վարկանիշային գործակալությունների գնահատականները:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են հատուցումների գծով պարտավորությունները, կրեդիտորական պարտքերը և ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները: Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 15-ում:

Հատուցումների գծով պարտավորություններ

Հատուցումների գծով պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և անվանական արժեքի տարբերությունը ճանաչվում է տարվա արդյունքում: Հատուցումների գծով պարտավորությունների հետագա չափումը կատարվում է ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը հատուցման ժամկետի ընթացքում ճանաչվում է տարվա արդյունքում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

Կրեդիտորական պարտքեր

Կրեդիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ

Մեկնարկի ամսաթվին Հիմնադրամը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Հիմնադրամի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

3.6 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են մնացորդները բանկերում և դրամական միջոցների համարժեքները, որոնք կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Հիմնադրամը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

3.7 Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի պահուստ

Այս պահուստն իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամի այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի և սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ դրանց իրական արժեքի տարբերությունը:

3.8 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցում են ծառայություններ, Հիմնադրամն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Հիմնադրամը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.9 Հատուցումների գծով ծախսեր

Հատուցումների գծով ծախսերը ճանաչվում են հատուցումների վերաբերյալ ՀՀ Պաշտպանության նախարարության կամ ՀՀ Արտակարգ Իրավիճակների նախարարության կամ ՀՀ Կառավարությանն առընթեր Ազգային Անվտանգության Ծառայության կամ ՀՀ Կառավարությանն առընթեր ՀՀ Ոստիկանության որոշումը ստանալու պահին՝ հատուցման ենթակա վճարվելիք գումարների ներկա արժեքի չափով, որը հավասար է հատուցման գծով պարտավորության իրական արժեքին: Հատուցումների գծով պարտավորությունները սկզբնական ճանաչումից հետո չափվում է ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով սկզբնական ճանաչման ամանակ կիրառված զեղչման տոկոսադրույքը: Պարտավորության՝ ամորտիզացված արժեքով վերաչափման տարբերությունը ներառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես ֆինանսական ծախս:

3.10 Եկամուտ

Հիմնադրամի եկամուտները ձևավորվում են հիմնականում նվիրաբերություններից, պարտադիր վճարներից և տոկոսներից:

Եկամուտ պարտադիր վճարներից և նվիրաբերություններից

Պարտադիր վճարներից և նվիրաբերություններից ստացված եկամուտները հասանելի են Հիմնադրամի գործունեության ֆինանսավորման համար, ինչպես նշված է Հիմնադրամի կառավարչական փաստաթղթերում: Այդ իսկ պատճառով, պարտադիր վճարները և նվիրաբերությունները ճանաչվում են որպես եկամուտ, երբ դառնում են հասանելի:

Տոկոսային եկամուտ

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

3.11 Զուտ ակտիվներ

Հիմնադրամի զուտ ակտիվները չեն բաշխվում հիմնադիրների միջև ոչ սովորական գործունեության ընթացքում, և ոչ էլ լուծարման ժամանակ:

4 Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում

2018թ.-ից սկսած Հիմնադրամը ներդրումներ է իրականացնում ՀՀ կառավարության պետական արժեկտրոնային պարտատոմսերում: Ներդրումները պետական պարտքային արժեթղթերում չափվում են իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պետական պարտքային արժեթղթերում ներդրումների իրական արժեքը կազմել է 3,286,585 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,392,773 հազար դրամ):

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար դրամ

	2021թ.	2020թ.
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	18,840	8,877
Պահուստների զուտ վերաչափում	(7,442)	9,963
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,398	18,840

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և մարմանը մնացած ժամկետների ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31		2020թ. դեկտեմբերի 31	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
Պետական պարտքային արժեթղթեր	7.33%-9.19%	2018թ.-2025թ.	7.33%-9.19%	2018թ.-2025թ.

5 Բանկերում տեղաբաշխված միջոցներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 90 օր տևողությամբ ավանդային հաշիվներ առևտրային բանկերում	4,372,727	2,923,619
90 օրից ավել տևողությամբ ավանդային հաշիվներ առևտրային բանկերում	13,625,000	18,770,000
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(196,131)	(239,413)
	17,801,596	21,454,206

Բանկերում տեղաբաշխված միջոցները ներկայացված են ՀՀ դրամով և առավելագույնը 550 օր (2020թ.՝ 454 օր) մարման ժամկետով:

Բանկերում տեղաբաշխված միջոցների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	239,413	186,478
Պահուստների զուտ վերաչափում	(43,282)	52,935
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	196,131	239,413

6 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ կենտրոնական բանկում ներդրված միջոցներ	2,373,591	9,459,497
Մնացորդներ բանկերում	96,707	1,729
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ	-	(1,157)
	2,470,298	9,460,069

7 Պարտավորություններ հատուցումների գծով

Հայաստանի Հանրապետությունում ներդրված զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովող հատուկ համակարգի շրջանակներում Հիմնադրամը ստացված նվիրաբերություններից ձևավորված միջոցներից տրամադրում է հատուցումներ ՀՀ սահմանները պաշտպանելիս տուժած մարտիկներին, կամ նրանց իրավահաջորդներին «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Հատուցումները տրամադրվում են մասամբ միանվագ, իսկ մնացած գումարը՝ ամսական հավասար վճարումներով՝ 20 տարվա ընթացքում:

Հատուցումների գծով պարտավորությունների իրական արժեքը որոշելու համար Հիմնադրամն օգտագործում է զեղչված դրամական հոսքերի մեթոդը՝ որպես զեղչման տոկոսադրույք օգտագործելով ՀՀ պետական երկարաժամկետ պարտատոմսերի մինչև մարումը եկամտաբերության տոկոսադրույքը: Հատուցումների գծով պարտավորությունների հետագա չափումը իրականացվում է ամորտիզացված արժեքով:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հատուցման գծով պարտավորությունների ամորտիզացված արժեքը կազմում է 115,089,513 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 27,004,507 հազար դրամ): Զեղչված դրամային հոսքերի դեպքում հատուցման գծով պարտավորությունը կկազմեր 236,565,769 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 55,674,991 հազար դրամ): Հատուցումների գծով պարտավորություններն ամորտիզացված արժեքով չափելիս առաջացող ֆինանսական բաղադրիչը ներկայացված է ծանոթագրություն 12-ում:

Հաշվետվու ամսաթվի դրությամբ հատուցումների գծով պարտավորության կտրուկ աճը պայմանավորված է 2020թ. սեպտեմբերին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով տուժած զինծառայողների բանակի նշանակալի աճով:

8 Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի իրական արժեքի վերագնահատման պահուստ

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի վերագնահատման պահուստն իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամի՝ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումների իրական արժեքի և սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ դրանց իրական արժեքի տարբերությունը:

9 Եկամուտ պարտադիր վճարներից և նվիրաբերություններից

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Պարտադիր վճարներ	29,072,266	9,134,279
Նվիրաբերություններ	3,101,266	7,975,855
	32,173,532	17,110,134

Պարտադիր վճարների աճը պայմանավորված է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքում տեղի ունեցած փոփոխությունով, համաձայն որի փոխվել է պարտադիր վճարների հաշվարկման կարգը՝ բերելով վճարների զգալի աճի:

Նվիրաբերություններից եկամուտները ներառում են ՀՀ կենտրոնական բանկից ստացված ֆինանսավորումը 300,951 հազար դրամ (2020թ.՝ զրո) համաձայն հաստատված բյուջեի:

10 Ֆինանսական եկամուտ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տոկոսային եկամուտ բանկերում տեղաբաշխված միջոցներից	1,571,953	2,150,806
Տոկոսային եկամուտ պետական պարտքային արժեթղթերում ներդրումներից	269,198	273,327
	1,841,151	2,424,133

11 Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի վերաչափումից օգուտ/(վնաս)

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում (տե՛ս ծանոթագրություն 4)	7,442	(9,963)
Բանկերում տեղաբաշխված միջոցների ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում (տե՛ս ծանոթագրություն 5)	43,282	(52,935)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի զուտ վերաչափում (տե՛ս ծանոթագրություն 6)	1,157	-
	51,881	(62,898)

12 Ֆինանսական ծախս

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցման գծով ծախսերի ֆինանսական բաղադրիչ	9,288,585	775,810
Վարձակալության գծով տոկոսային ծախսեր	4,185	-
	9,292,770	775,810

13 Հետհաշվեկշռային իրադարձություններ

2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի Դաշնության դեմ: Արևմտյան երկրները քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էական առևտրատնտեսական գործընկերն է, ուստի սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը կարող է հանգեցնել բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման: Բիզնեսի վրա հիմնական ազդեցություններից մի քանիսը կարող են ներառել մատակարարման շղթայի ընդհատումները, ակտիվների արժեզրկումը, աշխատակազմի հասանելիության սահմանափակումը, ճանապարհորդության սահմանափակումը, առևտրի սահմանափակումը, ֆինանսավորում ստանալու անկարողությունը և այլն:

Իրավիճակի անմիջական ազդեցությունը դժվար է հստակորեն կանխատեսել, սակայն ղեկավարության գնահատմամբ այն նշանակալի ազդեցություն չի ունեն Հիմնադրամի գործունեության և ֆինանսական հաշվետվությունների վրա:

14 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

14.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Հիմնադրամն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ֆինանսական ակտիվների բոլոր դասերի գծով արժեզրկումից կորուստների գնահատումը պահանջում է դատողությունների կիրառում, մասնավորապես ապագա դրամական հոսքերի արժեքի և ժամկետայնության ու գրավի արժեքի գնահատումը՝ արժեզրկումից կորուստները և պարտքային ռիսկի զգալի աճը որոշելիս: Այս գնահատումների հիմքում ընկած են մի շարք գործոններ, որոնց փոփոխությունները կարող են հանգեցնել պահուստների տարբեր մակարդակների: Հիմնադրամի ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկները բարդ մոդելների արդյունք են, որոնց հիմքում ընկած են մի շարք ենթադրություններ՝ ելակետային փոփոխականների ընտրության և դրանց փոխկապակցվածության վերաբերյալ: Ակնկալվող պարտքային կորուստների մոդելների դատողություններ և գնահատումներ պարունակող տարրերը հետևյալն են.

- Հիմնադրամի ներքին պարտքային գնահատման մոդելը, որը առանձին դասերի համար սահմանում է դեֆոլտի հավանականությունները,
- Հիմնադրամի գնահատման չափանիշները և որակական գնահատումը, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի զգալի աճ, և հետևաբար, ֆինանսական ակտիվների գծով պահուստները պետք է չափվեն ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող պարտքային կորստի հիմունքով,
- ակնկալվող պարտքային կորստի մոդելների մշակումը, ներառյալ տարբեր բանաձևերի և ելակետային տվյալների ընտրությունը,
- մակրոտնտեսական սցենարների և այնպիսի տնտեսական ելակետային տվյալների միջև, ինչպիսիք են գործազրկության մակարդակը և գրավի արժեքը, կապերի որոշումը և դրանց ազդեցությունը դեֆոլտի հավանականության, դեֆոլտի դեպքում գործիքի արժեքի և կորստի չափի վրա,
- կանխատեսվող մակրոտնտեսական սցենարների և դրանց հավանականությունների կշիռների ընտրությունը՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելների ելակետային տնտեսական փոփոխականները որոշելու համար:

Տե՛ս ծանոթագրություն 17՝ Հիմնադրամի կողմից պարտքային ռիսկի առավել մանրամասն բացահայտման համար:

Հատուցումների գծով պարտավորությունների իրական արժեքի չափումը

Այն պարագայում, երբ գործող շուկաների տվյալները բացակայում են, ֆինանսական գործիքների իրական արժեքը և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշելու համար ղեկավարությունը օգտագործում է գնահատման մեթոդներ: Այս գործընթացը ընդգրկում է գնահատումների և ենթադրությունների մշակում, որոնք համահունչ են նրա հետ, թե ինչպես շուկայի մասնակիցները կգնահատեին գործիքը: Ղեկավարությունը իր ենթադրությունների համար որպես հիմք է վերցնում դիտարկելի տեղեկատվությունը, սակայն այդպիսի տեղեկատվությունը միշտ չէ, որ հասանելի է: Այս պարագայում ղեկավարությունը օգտագործում է հասանելի լավագույն տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել հաշվետու ամսաթվի դրությամբ իրական գներից, որոնք կարող են ստացվել պարզած ձեռքի գործարքի պարագայում:

Հատուցումների գծով պարտավորությունների իրական արժեքը որոշելու համար Հիմնադրամը օգտագործում է զեղչված դրամական հոսքերի մեթոդը՝ որպես զեղչման դրույք օգտագործելով ՀՀ պետական երկարաժամկետ պարտատոմսերի մինչև մարումը եկամտաբերության տոկոսադրույքը:

Ռիսկեր և անորոշություններ

Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 7-ում, ընթացիկ տարում տեղի է ունեցել հատուցումների գծով Հիմնադրամի պարտավորությունների զգալի աճ: Արդյունքում հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամի պարտավորությունները, որոնք ներառում են կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունները, զգալիորեն գերազանցում են Հիմնադրամի ակտիվները: Հիմնադրամը հատուցումների գծով պարտավորությունների գնահատման ժամանակ հաշվի է առնում ակնկալվող դրամական հոսքերը, մասնավորապես՝ պարտադիր վճարներից գոյացող եկամուտները: Պարտադիր վճարներից գոյացող եկամուտները կայուն եկամուտներ են, քանի որ կարգավորվում են «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով: Հիմնադրամի հատուցումների գծով պարտավորությունները ենթակա են մարման 20 տարիների ընթացքում մաս-մաս և, եթե հատուցումների գծով պարտավորությունների զգալի աճ տեղի չունենա կամ վերը նշված ՀՀ օրենքում տեղի չունենան Հիմնադրամի համար ոչ բարենպաստ փոփոխություններ, ապա Հիմնադրամի ղեկավարության գնահատմամբ պարտադիր վճարներից գոյացող դրամային հոսքերը կբավականացնեն գոյացած պարտավորությունները մարելու համար, հետևաբար, տեսանելի ապագայում Հիմնադրամը կշարունակի իր նորմալ գործունեությունը:

15 Ֆինանսական գործիքներ

15.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.5-ում:

15.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	17,801,596	21,454,206
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,470,298	9,460,069
	20,271,894	30,914,275
Ֆինանսական ակտիվներ՝ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքերով չափվող		
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	3,286,585	3,392,773
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	23,558,479	34,307,048

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Պարտավորություններ հատուցումների գծով	115,089,513	27,004,507
Վարձակալության գծով պարտավորություն	73,994	-
Կրեդիտորական պարտքեր	5,206	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	115,168,713	27,004,507

16 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Բանկի չգեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 17-ում:

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2021թ.		
	Մինչև 1 տարի	1 տարուց ավելի	Ընդամենը
Ակտիվներ			
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	10,497,727	7,303,869	17,801,596
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,470,298	-	2,470,298
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	1,884,276	1,402,309	3,286,585
	14,852,301	8,706,178	23,558,479
Պարտավորություններ			
Պարտավորություններ հատուցումների գծով	12,721,914	223,843,855	236,565,769
Վարձակալության գծով պարտավորություն	21,676	70,446	92,121
Կրեդիտորական պարտքեր	5,206	-	5,206
	12,748,796	223,914,301	236,663,096
Զուտ դիրք	2,103,505	(215,208,123)	(213,104,617)

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2020թ.		
	Մինչև 1 տարի	1 տարուց ավելի	Ընդամենը
Ակտիվներ			
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	16,732,791	4,721,415	21,454,206
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9,460,069	-	9,460,069
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	50,198	3,342,575	3,392,773
	26,243,058	8,063,990	34,307,048
Պարտավորություններ			
Պարտավորություններ հատուցումների գծով	3,436,771	52,238,220	55,674,991
Զուտ դիրք	22,806,287	(44,174,230)	(21,367,943)

17 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են տոկոսադրույքի ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Հիմնադրամը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Հիմնադրամը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Հիմնադրամի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա:

Հետևյալ աղյուսակում համադրվում են միջին պայմանագրային և արդյունավետ տոկոսադրույքները՝

2021թ.	Միջին տոկոսադրույք	
	Պայմանագրային	Արդյունավետ
Պարտավորություններ		
Պարտավորություններ հատուցումների գծով	0%	8-10%
Վարձակալության գծով պարտավորություն	0%	11%

2020թ.	Միջին տոկոսադրույք	
	Պայմանագրային	Արդյունավետ
Պարտավորություններ		
Պարտավորություններ հատուցումների գծով	0%	8-10%

բ) Պարտքային ռիսկ

Արժեզրկման գնահատում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո: Գնահատում կատարելիս Հիմնադրամն օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում դեֆոլտի ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար Հիմնադրամը հաշվի է առնում ողջամիտ միտված ինչպես քանակական, այնպես էլ որակական չափանիշներ:

Եթե հաշվետու ամսաթվի դրությամբ ակտիվի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչման պահի համեմատ էականորեն չի փոխվել, ապա պարտքային ռիսկից հնարավոր կորստի պահուստը ճանաչվում է ակտիվի 12-ամսյա պարտքային ռիսկից հնարավոր կորստի գումարի չափով:

Եթե հաշվետու ամսաթվի դրությամբ ակտիվի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչման պահի համեմատ էականորեն ավելացել է կամ առկա են ակտիվի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ, ապա պարտքային ռիսկից հնարավոր կորստի պահուստ ճանաչվում է ակտիվի

ակտիվի՝ ամբողջ ժամկետի ընթացքում պարտքային ռիսկից հնարավոր կորստի գումարի չափով:

Ակտիվների գծով պարտքային ռիսկից հնարավոր կորստի հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով.

$$ECL = EAD \times PD \times LGD, \text{ որտեղ}$$

EAD-ն դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող ակտիվի արժեքն է,

PD-ն՝ դեֆոլտի հավանականությունը,

LGD-ն՝ կորուստը դեֆոլտի դեպքում:

Դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող ակտիվի արժեք (EAD)

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD-ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի: Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա:

Դեֆոլտի հավանականություն (PD)

PD- ն ներկայացնում է գործընկերոջ կողմից իր ֆինանսական պարտավորությունները կա՛մ առաջիկա 12 ամիսների (12mECL), կա՛մ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է՝ կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի դեֆոլտի հավանականությունը՝ սկզբնական ճանաչման պահից սկսած՝ ֆինանսական ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում:

Կորուստ դեֆոլտի դեպքում (LGD)

LGD-ն որոշվում է այն գործոնների հիման վրա, որոնք ազդում են դեֆոլտից հետո իրականացվող վերականգնումների վրա: Դրանք տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- ապահովված ֆինանսական գործիքների համար սա առաջին հերթին հիմնված է գրավի տեսակի և դրա կանխատեսվող արժեքների, պարտաքիր վաճառքների դեպքում՝ շուկայական/հաշվեկշռային արժեքների պատմական գեղչերի, բռնագանձման ժամանակահատվածի և դիտարկվող փոխհատուցման ծախսերի վրա:
- չապահովված ֆինանսական գործիքների դեպքում LGD-ն սովորաբար սահմանվում է ըստ գործիքի տեսակի՝ տարբեր գործընկերների վերականգնման սահմանափակ տարբերակման պատճառով: LGD-ի վրա ազդում է հավաքագրման ռազմավարությունը՝ ներառյալ պայմանագրային պարտքերի վաճառքը և գինը:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստը և ճանաչման պահի համեմատ պարտքային ռիսկի էական աճ ունեցող, սակայն արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ չունեցող ակտիվների կյանքի ընթացքում պարտքային ռիսկից հնարավոր կորուստը հաշվարկվում են ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, իսկ արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ ունեցող ակտիվների դեպքում՝ հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

17 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են տոկոսադրույքի ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Հիմնադրամը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Հիմնադրամը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Հիմնադրամի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա:

Հետևյալ աղյուսակում համադրվում են միջին պայմանագրային և արդյունավետ տոկոսադրույքները՝

2021թ.	Միջին տոկոսադրույք	
	Պայմանագրային	Արդյունավետ
Պարտավորություններ		
Պարտավորություններ հատուցումների գծով	0%	8-10%
Վարձակալության գծով պարտավորություն	0%	11%

2020թ.	Միջին տոկոսադրույք	
	Պայմանագրային	Արդյունավետ
Պարտավորություններ		
Պարտավորություններ հատուցումների գծով	0%	8-10%

բ) Պարտքային ռիսկ

Արժեզրկման գնահատում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո: Գնահատում կատարելիս Հիմնադրամն օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում դեֆոլտի ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար Հիմնադրամը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ որակական չափանիշներ:

Եթե հաշվետու ամսաթվի դրությամբ ակտիվի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչման պահի համեմատ էականորեն չի փոխվել, ապա պարտքային ռիսկից հնարավոր կորստի պահուստը ճանաչվում է ակտիվի 12-ամսյա պարտքային ռիսկից հնարավոր կորստի գումարի չափով:

Եթե հաշվետու ամսաթվի դրությամբ ակտիվի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչման պահի համեմատ էականորեն ավելացել է կամ առկա են ակտիվի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ, ապա պարտքային ռիսկից հնարավոր կորստի պահուստ ճանաչվում է տվյալ

ակտիվի՝ ամբողջ ժամկետի ընթացքում պարտքային ռիսկից հնարավոր կորստի գումարի չափով:

Ակտիվների գծով պարտքային ռիսկից հնարավոր կորստի հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով.

$$ECL = EAD \times PD \times LGD,$$ որտեղ

EAD-ն դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող ակտիվի արժեքն է,

PD-ն՝ դեֆոլտի հավանականությունը,

LGD-ն՝ կորուստը դեֆոլտի դեպքում:

Դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող ակտիվի արժեք (EAD)

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD-ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի: Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա:

Դեֆոլտի հավանականություն (PD)

PD- ն ներկայացնում է գործընկերոջ կողմից իր ֆինանսական պարտավորությունները կա՛մ առաջիկա 12 ամիսների (12mECL), կա՛մ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է՝ կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի դեֆոլտի հավանականությունը՝ սկզբնական ճանաչման պահից սկսած՝ ֆինանսական ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում:

Կորուստ դեֆոլտի դեպքում (LGD)

LGD-ն որոշվում է այն գործոնների հիման վրա, որոնք ազդում են դեֆոլտից հետո իրականացվող վերականգնումների վրա: Դրանք տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- ապահովված ֆինանսական գործիքների համար սա առաջին հերթին հիմնված է գրավի տեսակի և դրա կանխատեսվող արժեքների, պարտադիր վաճառքների դեպքում՝ շուկայական/հաշվեկշռային արժեքների պատմական զեղչերի, բռնագանձման ժամանակահատվածի և դիտարկվող փոխհատուցման ծախսերի վրա:
- չապահովված ֆինանսական գործիքների դեպքում LGD-ն սովորաբար սահմանվում է ըստ գործիքի տեսակի՝ տարբեր գործընկերների վերականգնման սահմանափակ տարբերակման պատճառով: LGD-ի վրա ազդում է հավաքագրման ռազմավարությունը՝ ներառյալ պայմանագրային պարտքերի վաճառքը և գինը:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստը և ճանաչման պահի համեմատ պարտքային ռիսկի էական աճ ունեցող, սակայն արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ չունեցող ակտիվների կյանքի ընթացքում պարտքային ռիսկից հնարավոր կորուստը հաշվարկվում են ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, իսկ արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ ունեցող ակտիվների դեպքում՝ հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Հիմնադրամի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Հիմնադրամի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները, բանկերում տեղաբաշխված միջոցները, ներդրումները պետական պարտքային արժեթղթերում և դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ		
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	3,286,585	3,392,773
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	17,801,596	21,454,206
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,470,298	9,460,069
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	23,558,479	34,307,048

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և բանկերում տեղաբաշխված միջոցների մասով պարտքային ռիսկը կառավարվում է ավանդները տարբեր և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Բանկերում տեղաբաշխված միջոցներ

Բանկերում տեղաբաշխված միջոցների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշը արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխությունն է: Այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում կորպորատիվ վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Moody's) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ Moody's գործակալության սխեմայի վարկանիշային ցուցանիշը սկսած BB մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից, կիրառվում է կորպորատիվ դեֆոլտի վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:

Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում

Ստորև ներկայացված են արժեթղթերի պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշը արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխությունն է: Այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում երկրի (սուվերեն) վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Moody's) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ Moody's գործակալության սխեմայի վարկանիշային ցուցանիշը սկսած B2 մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից, կիրառվում է կորպորատիվ դեֆոլտի վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:

Ենթադրվում է, որ Հիմնադրամի ֆինանսական ակտիվները ունեն ցածր պարտքային ռիսկ և կորուստի գծով պահուստը հիմնված է 12 ամսյա ակնկալվող կորուստի վրա:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական ակտիվների համար կորուստի գծով պահուստի մնացորդը համադրվում է տարեսկզբի մնացորդի հետ հետևյալ կերպ.

Հազար դրամ

	2021թ.	2020թ.
Ֆինանսական ակտիվներ՝ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքերով չափվող		
Կորուստների գծով պահուստը հունվարի 1-ի դրությամբ	18,840	8,877
Տարվա ընթացքում պահուստի ճանաչում	-	9,963
Տարվա ընթացքում չօգտագործված պահուստի հակադարձում	(7,442)	-
Կորուստների գծով պահուստը դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,398	18,840
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Կորուստների գծով պահուստը հունվարի 1-ի դրությամբ	240,570	187,635
Տարվա ընթացքում պահուստի ճանաչում	-	52,935
Տարվա ընթացքում չօգտագործված պահուստի հակադարձում	(44,439)	-
Կորուստների գծով պահուստը դեկտեմբերի 31-ի դրությամբ	196,131	240,570
	207,529	259,410

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Հիմնադրամը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

Հազար դրամ

	31 դեկտեմբերի 2021թ.					
	Մինչև 3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Պարտավորություններ հատուցումների գծով	3,249,613	9,472,301	50,234,508	173,609,347	236,565,769	115,089,513
Վարձակալության գծով պարտավորություն	5,419	16,257	70,446	-	92,121	73,994
Կրեդիտորական պարտքեր	5,206	-	-	-	5,206	5,206
	3,260,238	9,488,558	50,304,954	173,609,347	236,657,890	115,168,713

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2020թ.					
	Մինչև 3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Պարտավորություններ հատուցումների գծով	1,269,785	2,166,986	11,509,977	40,728,243	55,674,991	27,004,507
	1,269,785	2,166,986	11,509,977	40,728,243	55,674,991	27,004,507

18 Իրական արժեքի չափում

Հիմնադրամը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

18.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հիմնադրամն իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պետական ներդրումային արժեթղթերը դիտարկում է իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակում: Նշված գործիքների՝ Մակարդակ 2-ում իրական արժեքի գնահատումներում օգտագործված գնահատման մեթոդը հիմնված է զուտ դրամական միջոցների հոսքերի վրա, իսկ օգտագործված ելակետային տվյալները սահմանափակվում են ՀՀ պետական պարտատոմսերի եկամտաբերության կորով: Ամենազգայի փոփոխականը ՀՀ պետական պարտատոմսերի եկամտաբերության տոկոսադրույքն է:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Բանկերում ներդրված միջոցների, հատուցումների գծով պարտավորությունների և վարձակալության գծով պարտավորությունների իրական արժեքները մոտավորապես հավասար են իրենց հաշվեկշռային արժեքներին: Հիմնադրամը պարտավորությունները դիտարկում է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում, իսկ բանկերում ներդրված միջոցները՝ 2-րդ մակարդակում:

Հատուցումների գծով պարտավորությունները անտոկոս են և ունեն մինչև 20 տարի մարման ժամկետ: Հատուցումների գծով պարտավորությունների իրական արժեքը որոշելու համար Հիմնադրամը օգտագործում է զեղչված դրամական հոսքերի մեթոդը՝ որպես զեղչման դրույք

օգտագործելով ՀՀ պետական երկարաժամկետ պարտատոմսերի մինչև մարումը եկամտաբերության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորությունները ձևավորվել են գրասենյակային տարածքի վարձակալությունից, որը կնքվել է 5 տարի ժամկետով: Մեկնարկի ամսաթվին Հիմնադրամը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով երկարաժամկետ վարկերի ֆինանսական շուկայի միջին տոկոսադրույքը:

Բանկերում ներդրված միջոցների հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

19 Պայմանականություններ

19.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

19.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

20 Կապակցված կողմեր

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են Հիմնադրին (ՀՀ կենտրոնական բանկ) և հիմնական ղեկավար անձնակազմին:

20.1 Վերահսկողություն

Հիմնադրամը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից, որն էլ հանդիսանում է Հիմնադրամի հիմնադիրը:

20.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամն ունի ՀՀ կենտրոնական բանկում ներդրված միջոցներ 2,373,591 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 9,459,497 հազար դրամ):

2021թ. Հիմնադրամը ստացել է տոկոսային կամուտ ՀՀ կենտրոնական բանկում ներդրված միջոցներից 222,270 հազար դրամ (2020թ.՝ 113,544 հազար դրամ):

2021թ. Հիմնադրամը ստացել է ֆինանսավորում ՀՀ կենտրոնական բանկից 300,951 հազար դրամ (2020թ.՝ զրո) համաձայն հաստատված բյուջեյի:

20.3 Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Հատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	13,834	
	13,834	

21 Համադրելի ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 2.6-ում, Հիմնադրամի քաղաքականությունը ընթացիկ տարում հայտնաբերված սխալների հետադարձ ճշգրտումն է: 2022թ. ընթացքում ղեկավարությունը որոշել է, որ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության որոշ հոդվածներ ճիշտ տողերում չեն ներկայացվել: Հետևաբար կատարվել են որոշ վերադասակարգումներ, ինչպես նկարագրված է ստորև.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
		Մինչև վերաներկայացումը	Վերադասակարգման հետ կապված վերաներկայացման ազդեցությունը	Վերաներկայացումից հետո
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	(ա)	-	3,342,575	3,342,575
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	(բ)	-	4,721,415	4,721,415
		-	8,063,990	8,063,990
Ընթացիկ ակտիվներ				
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	(ա)	3,392,773	(3,342,575)	50,198
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	(բ)	30,912,545	(14,179,754)	16,732,791
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(գ)	1,730	9,458,339	9,460,069
		34,307,048	(8,063,990)	26,243,058
Ընդամենը ակտիվներ		34,307,048	-	34,307,048
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Պարտավորություններ հատուցումների գծով		23,694,770	-	23,694,770
		23,694,770	-	23,694,770
Ընթացիկ պարտավորություններ				
Պարտավորություններ հատուցումների գծով		3,309,737	-	3,309,737
		3,309,737	-	3,309,737
Զուտ ակտիվներ				
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի պահուստ		67,349	-	67,349
Կուտակված արդյունք		7,235,192	-	7,235,192
		7,302,541	-	7,302,541
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		34,307,048	-	34,307,048

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի		
	Ծանոթ.	Մինչև վերաներկայացումը	Վերադասակարգման հետ կապված վերաներկայացման ազդեցությունը	Վերաներկայացումից հետո
Եկամուտներ				
Եկամուտ պարտադիր վճարներից և նվիրաբերություններից		17,110,134	-	17,110,134
Ֆինանսական եկամուտ		2,424,133	-	2,424,133
Այլ եկամուտներ		650	-	650
		19,534,917	-	19,534,917
Ծախսեր				
Հատուցումների գծով ծախսեր	(դ)	(29,009,692)	775,810	(28,233,882)
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի վերաչափումից օգուտ/(վնաս)		(62,898)	-	(62,898)
Ֆինանսական ծախս		-	(775,810)	(775,810)
Այլ ծախսեր		(16)	-	(16)
		(29,072,606)	-	(29,072,606)
Տարվա արդյունք		(9,537,689)	-	(9,537,689)

(ա) Կատարվել է պետական պարտքային արժեթղթերում ներդրումների երկարաժամկետ մասի վերադասակարգում ոչ ընթացիկ ակտիվներին:

(բ) Բանկերում տեղաբաշխված միջոցներից ցպահանջ միջոցները վերադասակարգվել են դրամական միջոցների համարժեքներին, իսկ այլ ոչ ընթացիկ ավանդները՝ ոչ ընթացիկ ակտիվներին:

(դ) Հատուցումների գծով պարտավորությունների ֆինանսական բաղադրիչը հատուցումների գծով ծախսերից վերադասակարգվել է ֆինանսական ծախսերին: